

01/10.1/95-09

2009-01-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռազմիկ Զոհրաբյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Արման Սահակյանի և Համլետ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով նախատեսված է, որ քաղաքացին կարող է քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնել պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքայն ստաժ ունենալու դեպքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի տված պարզաբանման համաձայն՝ Հայաստանի հանրապետության զինված ուժերի սպայական կազմում ժամկետային զինվորական ծառայություն անցնելու ժամանակահատվածը նույնպես ներառվում է «պետական կառավարման ոլորտի աշխատանքային ստաժ» հասկացության մեջ: Այսինքն՝ բարձրագույն

կրթությամբ սպայական կազմում ժամկետային զինվորական ծառայություն անցած անձը կարող է զբաղեցնել քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն:

Քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողն ունի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված բավականին լուրջ լիազորություններ՝ որոշումներ կայացնելու, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների առումներով: Եթե «ավագ» զինվորական կոչումով սպայական կազմում ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին տիրապետում է այդ բնույթի որոշակի հմտությունների և կարող է իրականացնել պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները, ապա նշված փորձը չունեցող, սակայն ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացիները՝ քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնելու դեպքում իրենց լիազորություններն իրականացնելիս կարող են խնդիրներ ունենալ:

Բացի դրանից, հաշվի առնելով քաղաքացիական և զինվորական ծառայության առանձնահատկությունները, պետք է նշել, որ ինչպես զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայության ստաժը հիմք չի հանդիսանում, այնպես էլ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունը (շարքային) հիմք չի կարող հանդիսանալ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ներկայացված օրենքի նախագիծը քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մանվել Բադալյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-368-07.11.2008-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի «առնվազն երկու տարվա ստաժ» բառերից հետո ավելացնել «(կամ սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված քաղաքացիական ծառայության ստաժին հավասարեցված ժամանակահատվածը)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը 1-ին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Առաջին անգամ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու նպատակով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի մասնակցի ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը

պայմանավորված է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) կատարելագործմամբ:

Մասնավորապես, Օրենքով սահմանված է, որ քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու, համապատասխան մարմիններում մինչև տվյալ օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

Ներկայումս քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները դիմում են՝ հիմնականում աշխատանքային ստաժի վերը նշված չափանիշներին բավարարելու դեպքում: Նկատի ունենալով, որ Օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Ուստի, նախագծով առաջարկվում է, որ առաջին անգամ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու նպատակով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի մասնակցի ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը հավասարեցվի քաղաքացիական ծառայության ստաժին՝ այդ կերպ չսահմանափակելով զինվորական ծառայություն անցած քաղաքացիների հնարավորությունը՝ թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին քաղաքացիական ծառայության ստաժ ունեցող քաղաքացիների հետ հավասարապես մասնակցելու տեսանկյունից:

Բացի այդ, տվյալ լրացումը յուրատեսակ խթան կհանդիսանա ժամկետային զինվորական ծառայությունից չխուսափելու համար, քանի որ, ծառայելով զինված ուժերում, զորացրված անձը հնարավորություն է ստանում մասնակցել թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին ոչ թե 18 տարին նոր լրացած քաղաքացիների «կարգավիճակով», այլ, բարձրագույն կրթություն ունենալու դեպքում, հնարավորություն է ստանում մասնակցելու նաև առաջատար պաշտոնների համար հայտարարվող մրցույթներին: